

616.02

Խ-28

№ 4 «ՌԱԶՄԻՆ»-ի գրադարան № 4

W

2312

ԲՃ. Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ

Գին 15 Դ.

ՀԱՅ ԶԻՆԻՈՐԻՆ

Գին 15 Դ.

ԻՆՉ Է ՎԱՐԱԿԻՉ ՀԻՄՆԴՈՒԹԻՒՆԸ

~~ՍԵՐ.~~

616.02

Խ-28

Բ Ի Ն Լ Ի Ս

Տպարան «ԱՇԽԱՏԱԻՈՐ» Գողով. 39.

1918

ՀԱՅ ԶԻՆԻՈՐԻՆ

Ինչ է վառակիչ հիւանդութիւնը.

Բոլորդ զիտէք, որ շատ անգամ առողջ մարդը յանկամբ հիւանդանում է և ընկնում անկողնի մէջ. սրա պատճառները կարող են զանազան լինել. օրինակի համար, մէկը կարող է պատերազմում կամ հէնց իր տանը վիրաւորել գնդակից կամ դանակի հարւածից՝ կամ կարող է մի բարձր տեղից վայր ընկնել և իր ոտը կոտրել, ընկնել անկողին: Այսպիսի գէղքերում պարզ է, որ հիւանդանալու պատճառն կամ հրացանի գնդակն էր, կամ դանակի հարւածը և կամ թէ՛ բարձր տեղից վայր ընկնելը:

Նոյնպէս դուք զիտէք, որ մարդս պատահում է, որ հիւանդանում է ճիճուով՝ օրինակ մենակեաց ճիճուով — քափանակով — (սօլիտէրով): Պէտք է ասեմ, որ քափանակի բաղմը, որից ա-

ռաջանում է այդ ճիճուն, լինում է խոզի մսի մէջ, և երբ որ մենք խոզի մսը լաւ չենք եփում և ուտում ենք, այդ սաղմերը (փոքրիկ քափանակներ) մսի հետ ընկնում են մեր աղիքների մէջ, այնտեղ մեծանում են, ահազին ճիճու դառնում և հիւանդացնում մարդուն. հիւանդը սկսում է նւազել, թուլանալ, գունատել, սիրտը խառնում է, գլուխը պտոյտ է գալիս: Այս բոլորը նկատելով մարդ կամայ-աւանդաւ սկսում է մտածել, թէ՛ ինչ է պատահել իրան հետ, բայց երբ որ նա դուրս գնալուց նկատում է, որ իր աղիքներից ճիճուի կտորներ են վեր ընկնում, նա միայն այն ժամանակ է հասկանում, որ իր աղիքների մէջ վնասակար բան է ընկել, որից և ճիճու է գոյացել: Ահա այսպիսի գէղքերում մենք ասում ենք, որ մարդը ճիճուով վարակել է և ուրեմն հիւանդութեան պատճառը ճիճուն է:

Ինք երևի շատ անգամ տեսած կը-

լինէք, որ առողջ մարդը յանկարծ տա-
քոթիւն է տալիս, թուլանում, ախոր-
ժակը կորցնում և ընկնում է անկող-
նի մէջ, երբ որ բժիշկը գալիս է տես-
նում, ասում է, որ հիւանդը վարակ-
ւած է խօլերայով կամ տիֆով: Հիմա
հարց է բարձրանում, թէ ինչպէս է
որ առողջ մարդը յանկարծ հիւանդա-
նում է խօլերայով կամ տիֆով:

Ինչպէս որ մարդը փոքր ճիճուի
սաղմից վարակւում է քսփանակով,
այնպէս էլ տիֆով կամ խօլերայով
մարդս վարակւում է, երբ որ մարդու
մարմնի մէջ են ընկնում այդ հիւան-
դութիւնների սաղմերը. բայց որովհե-
տե տիֆի կամ խոլերի սաղմերը շատ
մանր են և մարդ սովորական աչքով
չի կարող տեսնել, այդ պատճառով էլ
շատ երկար ժամանակ նոյն իսկ բժիշկ-
ները չէին իմանում այդ վարակիչ հի-
ւանդութիւնների պատճառը:

Այս սարսափելի մանր փառապար-
տագմբը իսկապէս ոչ թէ կենդանի-

ներ են, ինչպէս ճիճուն, այլ՝ սրանք
բոյսի նման մի բան են, և կոչւում են
մանրէներ կամ բակտերիաներ (բացի-
ներ):

Այս բակտերիաներն այնքան մանր
են, որ մի կաթիլ ջրի մէջ մի քանի
միլիօն կը տեղաւորեն:

Եթէ մենք սովորական 3—4 անգամ
մեծացնող ապակիով այս մանրէներին
նայենք, մենք դարձեալ նրանց չենք
տեսնիլ. նրանց տեսնելու համար գիտ-
նականները մի գործիք են հնարել, որ
կոչւում է խոշորացոյց կամ միկրոս-
կոպ: Այս գործիքը մեծադեպ, խոզո-
վակի նման մի բան է, որի մէջ զըր-
ւած են լինում մի քանի մեծացնող
ապակիներ և դրանց շնորհիւ փոքրիկ
բակտերիային կարելի է մեծացնել հա-
զար անգամ, և այն ժամանակ միայն
բակտերիան մենք տեսնում ենք:

Քանի որ այս բակտերիաների շնոր-
հիւ մարդիկ հիւանդանում են և շատ
անգամ մեռնում, այդ պատճառով էլ

անհրաժեշտ է, որ ամեն մի մարդ լաւ հոտեւանայ, թէ ի՞նչ է բակտերիան. մարդս պէտք է իրա այդ փոքրիկ թշնամուն լաւ ճանաչի, որ կարողանայ նրանից խոյս տայ, որ նրանով չվարակւի և չհիւանդանայ:

Բակտերիաները ձևով բոլորովին իրար նման չեն. այնպիսի բակտերիաներ կան, որ կլոր են, այնպիսիները կան, որ ստորակէտի նման են, կան որ աւելի երկարաւուն են, կան և այնպիսիները, որ պտուտակի (վինտի) ձև ունեն և այլն:

Նայած թէ մեր մարմնի մէջ ի՞նչ տեսակի բակտերիա է ընկնում, մենք ըստ այնմ էլ հիւանդանում ենք որոշ տեսակի հիւանդութեամբ:

Բակտերիաները շատ արագութեամբ բազմանում են. օրինակի համար, մի բակտերիան ամենաշատը 20 բոլակում բաժանւում է երկու նոր բակտերիայի. կրկին 20 բոլակից յետոյ, այդ նոր երկուսը բաժանւում են և

դառնում են 4 հատ, յետոյ 8, 16, 32, 64 և այլն, այնպէս որ 5 ժամապ ընթացքում, մի բակտերիայից ստացւում է 32,448 հատ, իսկ 10 ժամում մօտ մի միլիօն: Այնպէս որ, եթէ մեր մարմնի մէջ երեկոյեան դէմ մի վնասակար բակտերիա ընկնի, նա մինչև առաւօտը կը բազմանայ և մի քանի միլիօնի կը հասնի:

Ի հարկէ այդ բազմաթիւ բակտերիաները պէտք է կերակրւեն և իրօք ներանք մտնող են ամենում մեր արիւնից և իրենցից էլ թոյն են արձակում, այնպէս որ մարդս շուտով այդ թոյնների ազդեցութիւնից հիւանդանում է:

Այս վնասակար բակտերիաները մեր մարմնի մէջ կարող են ընկնել զանազան ճանապարհներով: Երբեմն բակտերիաները մի հիւանդ սարդուց ընկնում են մի ուրիշ առողջ մարդու մէջ, երբ նոքա միասին միևնոյն ափսէից կերակուր են ուտում և կամ նոյն ա-

Խօթից ջուր են խմում: Երբեմն վարակումը պատահում է, երբ հիւանդ մարդը առողջի հետ համըռուում է. երբեմն էլ այդ փոքրիկ բակտերիաները մեր թոքերի մէջն են ընկնում փողու հետ միասին:

Շատ յաճախ բակտերիաները մեր արեան մէջն են ընկնում կաշւի միջոցով, եթէ մարդուս կաշին որեւէ պատճառով ֆլասուած՝ պատուած է լինում, կամ զանազով կտրւած: Այսպիսի դէպքերում պէտք է շատ զգոյշ լինել. — կտրւած տեղը պէտք է մաքուր ջրով լւանալ և բոլորովին մաքուր շորով փաթաթել, որ կեղտոտութիւններ չընկնեն. շատ մեծ սխալ է, երբ մարդիկ ցեխ կամ այլ կեղտոտութիւններ են զնում վէրքի վրայ բծկելու նպատակով. այդ կեղտոտութիւնները շատ հեշտութեամբ մարդուս արիւնը կարող են վարակել և գրա շնորհիւ մարդ կարող է մեռնել:

Ճիշտ է՝ մարդիկ շատ անգամ իրենց

մեղքը կամ մի ուրիշ տեղը կտրում են և առանց մաքրութեան խիստ կերպով հետևելու, առողջանում են, բայց զադեռ ևս չի նշանակում, թէ միշտ այդպէս կը լինի. շատ անգամ էլ դժբախտաբար, այդ կեղտոտութիւններով զանազան ֆլասակար բակտերիաներ են ընկնում մեր արեան մէջ և առաջ են բերում մեր մարմնի ընդհանուր վարակումն. այն ժամանակ մարդս այլ ևս բժշկւել չի կարողանում, որի շնորհիւ էլ մեռնում է:

Վարակիչ բակտերիաների մի քանի տեսակն էլ մեր մարմնի մէջն են ընկնում միջատների՝ ոչիլի, լուի և բազլինջի (կոպի) շնորհիւ, օրինակի համար անդադարա՞ (возвратный тифъ — կրկնադ տիֆ), բժաւար (сыпной тифъ տիֆը տարածւում են այդ միջատների միջոցով: Երբ ոչիլը կծում է մի տիֆով հիւանդ մարդու, ի հարկէ այդ ոչիլը ինքն էլ վարակւում է և երբ որ

այդ վարակւած ոջիլը ընկնում է մի
դարիշ առողջ մարդու վրայ ու նրան
կծում, այդ մամանակ նա վարակում
է ուրիշ առողջ մարդուն և հիւանդաց-
նում է տիֆով:

Ահա թէ ինչու՝ պէտք է զգոյշ լինել
այդ միջատներից և մանաւանդ ոջի-
լից. այս պատճառով էլ անհրաժեշտ է,
որ ամեն մի զինուոր թէ՛ պատերազմի
դաշտում և թէ՛ թիկունքում հետևի իր
մաքրութեան, սպիտակեղէնին և աշխա-
տի, որքան կարելի է, շուտ-շուտ լաց-
ւի, շորերը լանայ, տաք ջրի մէջ եր-
տայ, որպէսզի ոջիլները բուռն չդնեն և
չքաղմանան: Նոյնպէս մաշերը պէտք
է կարճ խուզել, որպէսզի գլուխը մա-
քուր լինի և լուանալն էլ հեշտ. ով որ
այս բաներին լաւ հետևէ, նա դժւար
թէ հիւանդանայ:

Վարակիչ հիւանդութիւնների շար-
քին է պատկանում նոյնպէս խօլերան,
որի հայրենիքը Հնդկաստանն է, որ-

տեղից էլ նա տարածւում է մեր կող-
մերը, և այդպիսով առաջ է բերում
խօլերայի համաճարակը—էպիդէմիան:

Յօլերան, ինչպէս գիտէք, շատ խիստ
վարակիչ հիւանդութիւն է. հիւանդա-
ցողներից շատերը մեռնում են: Այս-
պիսի մի խիստ վարակիչ հիւանդու-
թեան պատճառը դարձեալ մի շատ
փոքր բակտէրիա է. որը պէտք է
1000 անգամ մեծացնենք, որ մի սառ-
րակէտի չափ դառնայ և մենք տես-
նենք:

Այս փոքրիկ բակտէրիան բուն է
զնում մեր աղիքների մէջ և մեզ հի-
ւանդացնում խօլերայով: Յօլերայով
հիւանդ մարդը երբ լուծում է, նրա
լուծի մէջ միլիոնաւոր բակտէրիաներ
են լինում, և ահա առողջ մարդիկ
այս բակտէրիաներից էլ վարակ-
ւում են:

Այժմ տեսնենք թէ՛ Բնչպէս է լի-
նում, որ յանկարծ մի որ և է երկրում
խօլերա է սկսւում:

Երբ որ խօսերով վարակած մարդը
չաց տեղերում, մանաւանդ ջրերի, գե-
տերի մօտ լուծում է, այն ժամանակ
լուծի մէջ եղած բակտէրիաները ջրի
նոսանքով տարածւում են զանազան
կողմեր, գնում են գէպի զանազան
գիւղեր, քաղաքներ. և երբ որ այդտեղի
մարդիկ, չիմանալով, այդ կեղտոտւած
վարակած ջրից, առանց եփ տալու,
խմում են, իրենք էլ են վարակւում և
հիւանդանում. այս ձևով մի մարդը
պատճառ է դառնում հազարաւոր
մարդկանց հիւանդանալուն:

Ահա թէ ինչու բժիշկները խորհուրդ
են տալիս՝ խօսերայով հիւանդ
մարդու լուծը դուրս չը թափել, այլ
մի փոս փորել, այնտեղ ածել և վրան
էլ կրի լուծածք (կրաջուր) ածեն, ու-
րովհետեւ կրաջուրը սպանում, ոչնչաց-
նում է խօսերայի բակտէրիաներին.
այդ փոսը պէտք է հողով ծածկել.

Ահա թէ ինչու խօսերայի ժամանակ

ջուրը պէտք է եփ տալ և յետոյ խը-
մել, որպէսզի եթէ ջրի մէջ խօսերայի
բակտէրիաներ լինեն, եփելուց ոչնչա-
նան և մեզ չհասնեն:

Հիմա էլ տեսնենք, թէ ինչպէս է,
որ մարդս յանկարծ որովայնային
(брюшной тифъ) տիֆով հիւանդա-
նում է:

Որովայնային տիֆը միշտ մեղա-
նում լինում է, բայց քիչ քանակու-
թեամբ. երբեմն այս հիւանդութիւնը
յանկարծ սկսում է տարածւել և մի-
անգամից շատ մարդիկ վարակւում են.
այս հիւանդութիւնն էլ խօսերայի հա-
մաճարակի՝ (էպիդէմեայի) նման շատ
մարդիկ է կոտորում:

Որովայնային տիֆն էլ տարածւում
է բակտէրիաների միջոցով. այս բակ-
տէրիաներն էլ բազմանում են աղիք-
ներում և մեծ քանակութեամբ դուրս-
ւում են հիւանդի լուծի մէջ: Երբ որ
հիւանդի լուծից այս բակտէրիաները

ընկնում են ջրի մէջ և մարդիկ այդ ջրից հում-հում խմում են, այն ժամանակ վարակւում են այս տիֆով. այդ պատճառով էլ, պէտք է զգոյշ լինել հում ջրից: Ուրեմն որովայնային տիֆով հիւանդի լուծն էլ պէտք է կրի լուծածքով օխտահանել, այսինքն բակտէրիաները ոչնչացնել, ինչպէս այդ ասացի խօլերայի լուծի համար:

Ամեն մի զինւոր պէտք է իմանայ, որ մաքրութիւնը զինւոր բանն է այս հիւանդութիւններով չվարակելու համար. հէնց այդ մաքրութեան շնորհիւ է, որ գերմանական զօրքի մէջ շատ քիչ հիւանդութիւն է լինում և շատ քիչ մեռնող:

Բացի այս, մեր զինւորները պէտք է նոյնպէս իմանան, որ խօլերայից և որովայնային (բրիւշոյ) տիֆից չը վարակւելու համար շատ լաւ միջոց՝ գիդ կայ, որ եթէ այդ գիդից մարդու կաշւի տակը ածենք, այսինքն

սրակներ, այն ժամանակ մարդս կամ բոլորովին չի վարակւի և եթէ պատահում է, որ վարակւում էլ է, այն ժամանակ հիւանդութիւնը շատ թեթեւ կերպով է անցնում և հիւանդը շուտ է առողջանում:

Շատ անգամ զինւորները չեն հասկանում այդ տեղերի նշանակութիւնն ու արժէքը, փախչում են և թոյլ չեն տալիս, որ բժիշկը կամ ֆելդշերը այդ նախազգուշական դեղը սոսկի ի հարկէ այդպիսիները իրանք իրենց վնասում են:

Նոյնպէս պէտք է իմանալ, որ երբ որեւէ մէկը վարակիչ հիւանդութիւնով վարակւում է, այն ժամանակ պէտք է նրա բոլոր հագուստները, սպիտակեղէնը լաւ եփ տալ ջրում, որ բոլոր վարակիչ հիւանդութիւն առաջ բերող բակտէրիաները փչանան և հիւանդութիւնն աւելի չտարածւի: Նոյնպէս հիւանդի բնակարանը՝ սենեակը պէտք

է տաք ջրով և սապնով լանալ և բը-
ժշկին կամ Ֆելդշերին իսկոյն իմաց
անել որ սննեակը դեղորայքով լա-
նան, այսինքն ախտահանեն:

Պէտք է ի նկատի առնել, որ բոլոր
բակտէրիաները շատ վախում են լոյ-
սից, արեից և եթէ մեր սննեակների
մէջ շատ լոյս ընկնի, արև վնի և որ
գլխաւորն է մաքուր պահենք մեր
բնակարանները, այգալիսի տեղերում
բակտէրիաները չեն կարող բուծ դը-
նել և մեզ հիւանդացնել:

ՀՀ Ազգային գրադարան



NL0073384

610

107-իսկ

2013